

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2013 թ.

N 317-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2013 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

I. Ընդհանուր դրույթներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման ծրագրի իրականացումը բխում է հանրապետությունում առկա բնապահպանական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Բնության հուշարձանների անձնագրերի կազմումը իրականացվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N1053-Ն որոշմամբ հաստատված ցանկի համաձայն: Ցանկում ընդգրկված բնության հուշարձանների ընդհանուր քանակից 2013 թվականին նախատեսվում է դաշտային հետազոտությունների իրականացմամբ կազմել յոթ անձնագիր, որոնց անվանումներն արտահայտված են ստորև ներկայացված աղյուսակում.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	«Աստղաշենի» Բրաժո ֆաունա	Ասկերանի շրջան, Աստղաշեն գյուղի հյուսիս-արևմտյան եզերքում
2	«Հոնուտի ձոր» կիրճ	Շուշիի շրջան, Կարկառի գետահովտի՝ Քարին տակ-Մխիթարաշեն գյուղերի հատվածում
3	«Ազոխի» քարանձավ	Հադրութի շրջան, Ազոխ գյուղից 1կմ հարավ-արևելք, ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա: Երկարությունը՝ 190մ.
4	«Թութսունի» հանքային աղբյուր (Տաք ջուր)	Շահումյանի շրջան, Թութսուն գետի միջին հոսանքում, Ջուար գյուղից 6 կմ հարավ, Թութսուն գետի ձախ հովտալանջում
5	«Թուրշու» հանքային աղբյուր	Շուշիի շրջան, Լիսագոր գյուղի հյուսիսային եզերքում: Արտավիժում է պարբերաբար՝ ստորգետնյա դղրդյուններ առաջացնելով
6	«Դիցմայրի» Սուսիների պուրակ	Քաշաթաղի շրջան, Դիցմայրի գյուղից արևմուտք՝ ՀՀ սահմանամերձ մասում
7	«Սուսի արևելյան» (Մխտորաշենի տնջրի) ծառ	Մարտունու շրջան, Մխտորաշեն գյուղի մոտ: Տրամագիծը՝ 600սմ, բարձրությունը՝ 25մ, տարիքը՝ 2020 տարի

Բնության հուշարձանի անձնագիրն ընդգրկվելու է

- 1) անվանումը և դասակարգումը.
- 2) տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները.
- 3) նկարագրությունը, չափագրությունը և վիճակը.
- 4) սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը.
- 5) տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին.
- 6) պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները.
- 7) տվյալներ պահպանությունն իրականացնող սուբյեկտի մասին:

Բնության հուշարձանների անձնագրերի կազմման համար վերը թվարկված աշխատանքների կատարումը պահանջում է համապատասխան մասնագիտական մոտեցում մասնագիտացված կազմակերպությունների ներգրավմամբ:

II. Բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների նպատակը և խնդիրները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման 2013 թվականի միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է դաշտային հետազոտությունների միջոցով և ստացված նյութերի գրասենյակային մշակմամբ այդ անձնագրերի ստեղծման աշխատանքների իրականացմանը:

Ծրագրի հիմնական խնդիրն է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության եզակի հուշարձանների պահպանության նախադրյալների ապահովումը, որը կնպաստի հանրապետության պետական բյուջեի ծախսերի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությանն առնչվող բնապահպանության ոլորտային գերակայության իրագործմանը:

III. Ծրագրային միջոցառումների համակարգը

Ծրագրով սահմանվում են 2013 թվականին իրականացվելիք հետևյալ միջոցառումները.

1. Բնության հուշարձանների զբաղեցրած տարածքների հստակեցում և չափագրում,
2. Բնության հուշարձանների պահպանական գոտու սահմանում և քարտեզագրում,
3. Բնության հուշարձանների անձնագրերի մշակում և կազմում,
4. Բնության հուշարձանների տվյալների թվայնացում և երկրատեղեկատվական բազայի ստեղծում:

IV. Ծրագրային միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման շրջանակներում ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ունենալ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների չափերը, քարտեզ-հատակագծերը և հուշարձանների ու դրանց պահպանման գոտու սահմանների նկարագիրը,
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների մշակված անձնագրերը,
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների երկրատեղեկատվական բազան:

V. Ծրագրի ֆինանսական ապահովումը և իրականացման սկզբունքը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2013 թվականի ծրագրի ֆինանսավորման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից կհատկացվի 2.0 մլն. դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ